



Գևորգ ԷՄԻՆ

Այանքում հաճախ է այդպես պատահում

Այանքում հաճախ է այդպես պատահում._
Ինչքան կանայք կան այս լայն աշխարհում,
Որ քո կողքին են,
ձեր նու՛յն քաղաքում.
Հաճախ նու՛յն մայթում
Կամ նու՛յն տան բակում,
Բայց...
Այնքան գիտես դու նրանց մասին,
Ինչքան որ Սի՛սը ... Մասիսի՛ մասին...

Այո՛, հաճախ է այդպես պատահում._
Բայց մի գիշեր է լինում աշխարհում,
Որ, երբ նայում ես մեկի աչքերին,
Միրո կարոտից ճաքաց շուրթերին,
Բռնում ես մեկի ձեռքը տագնապով.
Շոյու~մ այդ ձեռքը մատներինդ տապով,
Մի վայրկյանի մեջ,
կամ ակրնթարթում,
Նրա ողջ կյա~նքն ես գրքի պես կարդում...

Եվ հեռու~ հեռու~ մի գյուղ, կամ քաղաք,
Լեռնային գետի մի խե~նթ աղաղակ,

Մի տուն՝ նորովա՜ծ օտար քաղաքում,
Մի ծառ՝ խոնարհված անձանոթ մայթում.
Այնպե՜ս են հանկարծ հարագատ դառնում,
Որ... զարմանու՜մ ես
ու չե՜ս հասկանում,
Թե մինչև այսօր
Դու առանց դրա
Ինչպե՜ս ես ապրել այս փուչ աշխարհում...
...Ափսո՛ս, որ... քի՜չ է այդպես պատահում: